



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
 ՀՀ ԲՆԱԴԱՆՆԵՐԻ ՄԵՏԻՆԻՍՏԻՆԻ
 ԵՄԿՈՒՄԻՏԻ Ժ/Պ
 ԱՄԻՆԱՅԱՆ

[Handwritten signature]



« 12 » 04 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
 ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 29

Ձեռնարկողը՝

<<ԷՅ ԸՆԴ ԷՄ ՌԵՅՐ>> ՍՊԸ
Ք. Երևան, Ամիրյան 4/7

Գործունեությունը՝

Արտավազ գյուղում ածխաթթվային հանքային և սպորերկրյա քաղցրահամ ջրաղբյուրների շահագնացման արտադրամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
<< Կոպայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



[Handwritten signature]

Վ. Սահակյան

թիվ ԲՓ 29

<12> 04 2018թ.

Արտավազ գյուղում ածխաթթվային հանքային և ստորերկրյա քաղցրահամ ջրաղբյուրների ջրի շշալցման արտադրամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ <<ԷՅ ԸՆԴ ԷՄ ՌԵՅՐ>> ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիան /Գ կատեգորիա/

Տեղադրման վայրը՝ << Կոտայքի մարզ, Մեղրաձոր համայնքի Արտավազ գյուղ

<<ԷՅ ԸՆԴ ԷՄ ՌԵՅՐ>> ՍՊ ընկերության կողմից << Կոտայքի մարզի Արտավազ գյուղում քաղցրահամ և հանքային ջրերի շշալցման գործարանի կառուցումը << կառավարության կողմից արժանացել է հավանության: Հաշվի առնելով տվյալ տարածքում խմելու և հանքային ջրերի աղբյուրների առկայությունը << կառավարության կողմից ընտրել է վերոնշյալ տարածքը՝ լիազորելով ընկերությանը ստանալ համապատասխան թույլտվություններ՝ ծրագրի իրականացման համար:

Ներկայումս «Էյ ընդ Էմ Ռեյր» ՍՊ ըկերությունն իր սեփականությունը հանդիսացող տարածքում ջրաղբյուրների համար << օրենսդրական պահանջներին համապատասխան ստացել է հանքային և քաղցրահամ ստորերկրյա ջրերի հանքարդյունահանման իրավունք և ջրօգտագործման թույլտվություն: Ջրաղբյուրները և նախատեսվող արտադրամասը գտնվում են Արտավազ գետի հովտում, որը Մարմարիկ գետի ձախափնյա վտակն է: Իր գործունեության մեկնարկից ընկերությունը կատարել է ջրաղբյուրների քանակական և որակական մոնիթորինգ, իրականացվել է ջրառ կառույցներ, ջրաղբյուրներից դեպի նախատեսվող շշալցման գործարանի տարածք անցկացվել են ջրի խողովակներ, վերակառուցվել են գրունտային ճանապարհները:

Ընկերությունը նախատեսում է Հայաստանում հիմնել խմելու և հանքային ջրի շշալցման բարձրակարգ արտադրական գործարան՝ իր անհրաժեշտ օժանդակ կառույցներով, 24000 շիշ/ժամ արտադրողականությամբ: Բնական պայմաններում նախատեսվում է շշալցնել այնպիսի մաքրության ջուր, որը վարակազերծելու կարիք չի ունենալու: Արտադրամասը կլինի հնարավորինս ավտոմատացված, եվրոպական ժամանակակից չափանիշներին համապատասխան: Կլիրաուեն գերժամանակակից տեխնոլոգիաներ ու սարքավորումներ, որոնց միջոցով կապահովվի բնապահպանական և որակական վերահսկողության բարձր չափանիշները, գործարանի անվտանգության արդյունավետություն և ֆինանսական իրագործելիություն:

Նախագծվող գործարանի տարածքում կատարվել են ինժեներա-տեխնիկական ուսումնասիրություններ: Նախագծվող շենքի հիմքերի կայունության վրա բացասաբար



ազդող Ֆիզիկա-երկրաբանական պրոցեսներ ու երևույթներ տեղամասում չեն դիտվել: Կառուցապատման համար տրամադրվող տարածքի բացարձակ նիշերը տատանվում են 1945.0-1953.0մ սահմաններում:

Գործարանի տարածքը ելնելով ռելիեֆի բարձրության նիշերի տարբերությունից նախատեսվում է հարթեցնել: Հարթեցնելուց առաջ հանվելու և պահեստավորվելու է հողաբուսական վերին ծածկը /0.4մ հաստությամբ և 4 հազ. խոր.մ ծավալով/, որը աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է օգտագործել տարածքների բարեկարգման և կանաչապատման աշխատանքների ժամանակ:

Նախագծվող շշալցման արտադրման իրենից ներկայացնում է ուղղանկյուն բետոնե շինություն՝ թեթև մետաղական կոնստրուկցիաներով հավաքվող առաստաղով: Հիմնական շինությունը լինելու է մեկհարկան, զբաղեցնում է 132մ երկարությամբ և 54մ լայնությամբ տարածք: Նկուղային հարկ չի նախատեսվում: Մերձակա տարածքում նախատեսվում է՝ տրանսֆորմատորային ենթակայան, մշտական միկրոկլիմայի խուց, կաթսայատուն, ավտոկայանատեղի, 2 հատ անջրթափանց հորեր: Նախագծվող տարածքը գազիֆիկացված չէ: Տարածքում առկա են բարձր լարման հոսանքի գծերը, նախատեսվում է տեղադրել նոր էլեկտրատրանսֆորմատորային հանգույց: Արտադրամասի ջեռուցման և տաք ջրամատակարարման նպատակով նախատեսվում է տեղադրել 2 հատ 450 կՎտ դրվածքային հզորությամբ կաթսաներ:

Շինության մեջ, պատի ամբողջ երկայնքով, 7մ լայնությամբ լինելու են սրահներ, որոնցում կլինեն՝ սանհանգույց, բաղնիք, աղբի կոնտեյներ, սանիտարա-հիգիենիկ քսանյութերի պահեստ, էլ.հոսանքի կարգավորման և հաշվառման սենյակ, պահեստներ, հանդերձարան, լաբորատորիա: Շշալցման արտադրամասի տարածքում նախատեսվում է տեղադրել երկու շշալցման հոսքագիծ՝ պոլիէթիլենե և ապակյա տարաների համար: Գործարանը աշխատելու է տարեկան 260 օր, օրը 16 ժամ: Շշալցումը իրականացվում է 0.5լ, 1.0լ և 1.5լ տարողությամբ պոլիէթիլենե և ապակյա շշերի մեջ: Արտադրամասի արտադրողականությունը 14000 մեկ լիտրանոց շիշ/ժամ է: Աղբյուրների ջուրը օգտագործվելու է նաև տեխնոլոգիական, օժանդակ, սանիտարական և աշխատողների տնտեսա-կենցաղային կարիքների համար:

Շշալցման հոսքագիծը մաքսիմալ ավտոմատացված է և ապահովում է որակի բացարձակ վերահսկում: Շշալցման համար անհրաժեշտ սարքավորումները և տեխնոլոգիական հոսքագծերը ձեռնարկությունը ձեռք է բերելու այս ոլորտում գործող առաջատար ընկերություններից:

Շշալցման գործարանի շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել առավելագույնը 36 ամսվա ընթացքում: Հողային աշխատանքների ծավալները կկազմեն 18000մ³: Ապրանքային բետոնը պատրաստի վիճակում շին. հրապարակ է բերվելու ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով: Ամրանային իրերը պատրաստվելու են հիմնականում մասնագիտացված բազաներում:

Շրջակա միջավայրի վրա և ծրագրի ազդեցության ենթակա համայնքի բնակչության վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող կայանների օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Ազդեցությունները կարող են արտահայտվել օդային ավազանի աղտոտմամբ լանդշաֆտի ժամանակավոր փոփոխությամբ, շրջակա տարածքների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտմամբ, արմուկ-ազդեցությամբ, բնակչությանը պատճառված սոցիալական ազդեցություններով: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր բնակչության և



սոցիալական ազդեցությանների կանխման, կամ մեղմացման համար նախատեսվել են միջոցառումներ:

Հողաբուսական շերտը, որի ծավալը 1 հա մակերեսում գնահատվել է 4000մ³ ծավալ, կտրվելու է (0.4մ հաստությամբ) և պահեստավորում շինհրապարակում հետագայում կանաչապատման նպատակով օգտագործելու համար: Աշխատանքների ավարտին կիրականացվի բնական լանդշաֆտի վերականգնում և կանաչապատում: Նախատեսվում է շուրջ 1 հա տարածքի բարեկարգում և կանաչապատում, որի համար նախատեսված ծախսերն ընդհանուր կազմում են 8 մլն.դրամ: Տարածքը կանաչապատվելու է խոտածածկով և թփուտային ծառատեսակներով:

Արտադրամասի մաքրման և հատակի լվացման աշխատանքներից առաջացած հոսքաջրերը հավաքվելու են առաջին անջրթափանց հորում, իսկ աշխատաողների տնտեսակենցաղային կեղտաջրերը հավաքվելու են երկրորդ հորում, որոնք սահմանված կարգով, մասնագիտացված կազմակերպության կողմից հատուկ կոյուղատար մեքենաներով կտեղափոխվեն:

Շշալցման գործարանի շահագործման ընթացքում արտադրական թափոններ չեն առաջանում: Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա մասնաշենքի կառուցման ընթացքում, շինարարական աղբն է, որն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Շահագործման փուլում առաջացած կոմունալ կենցաղային թափոնները կուտակվելու են հատուկ տարաներում և սահմանված կարգով հեռացվում աղբավայր:

Նախատեսվող ոռոգման համակարգի շինարարության և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները մեղմելու, գործունեության նկատմամբ վերահսկողություն և մշտադիտարկումներ կազմակերպելու նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան (ԲԿՊ): Այն ներառում է՝ տեղեկատվություն հնարավոր ռիսկերի մասին, յուրաքանչյուր ազդեցության նվազեցման, կամ կանխարգելման համար նախատեսվող միջոցառումների ցանկը, դրանց կատարողներին, պատասխանատուներին և վերահսկողությունը:

Նախնական գնահատման հայտի փորձաքննության փուլում 06.04.2018թ ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի Արտավազ գյուղում անցկացվել են հանրային քննարկումներ: Քննարկումների ժամանակ գործունեության իրականացումն արժանացավ հավանության:

Ամփոփելով և վերլուծելով հայտում ներկայացված շրջակա միջավայրի բաղադրիչների նկատմամբ բնապահպանական և սոցիալական վերլուծությունները, կարելի է եզրահանգել, որ գործունեության իրականացման ընթացքում ազդեցության ենթակա համայնքի բնակչության վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում, աղտոտվածությունը մթնոլորտային օդի, ինչպես նաև ջրային և հողային ռեսուրսների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ստանալ համապատասխան համաձայնեցումներ՝ բուսաշերտի ժամանակավոր պահեստավորման, շինարարական աղբի և թափոնների հեռացման վայրերի վերաբերյալ:
2. Զրոգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով



3. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և բնապահպանական մոնիտորինգի պլանում առաջարկվող միջոցառումների և մոնիտորինգային դիտարկումների իրականացումը և պահպանել վերջիններս իրականացման ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԷՅ ԸՆԴ ԷՄ ՌԵՅՐ>> ՍՊԸ կողմից ներկայացված Արտավազ գյուղում ածխաթթվային հանքային և ստորերկրյա քաղցրահամ ջրաղբյուրների ջրի շշակման արտադրամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Հ. Մկրտչյան